



## Յովիանես Շիրազ

Մորս սրտի հետ աշխարհն եմ չափել՝

Մորս սրտի հետ աշխարհն եմ չափել՝

Ելի մեծ էր նա, մեծ էր ու անզին,

Արև աչքերի լույսն է նա թափել՝

Լուսնյակ դառնալով՝ որդոց օրոցքին...

Եվ հիմա քիչ է, քեւ աչքերս տամ,

Թե սիրտս հանեմ ու տամ մայրիկիս,

Ախ, մայր երգելուց ինչպե՞ս կշտանամ,

Մայրս պատկերն է մայր հայրենիքիս:

\*\*\*

Պատանի սիրտս բաժակ էր բյուրեղ,

Որ լցվեց մի օր գինով աչքերիդ,

Ու ես այն գինով հարբած խելահեղ

Քո ոտքերն ընկա ու դարձա գերիդ:

Բայց դու փշրեցիր իմ սիրտը մատադ,

Ա'խ դու փշրեցիր գավաթն իմ սրտի,

Թափվեց իմ գինին... արյունաշաղախ,

Ու ցնդեց պատրանքն իմ կույր կարոտի, –

Բացվեցին սրտիս աչքերը բոլոր,

Անցավ խելահեղ գինովությունս,

Կուշ եկավ խարված իմ սիրտը մոլոր,

Ամաչեց, որ քեզ նմանն էր բույնս:

Դու ցոփ գինետան մի բաժակ էիր,  
Սիրոյս գինին էր աչքերս կապում,  
ԱՇԽ, ինչ լավ եղավ, որ փշրվեցիր,  
Քանզի թեզ այժմ թեզնով եմ չափում,  
Քեզնով, ինչպես լուսինը՝ լուսնով,  
Որ լուսացել էր սիրոյս արևով,  
Քեզնով եմ չափում, ոչ թե ցնորդով սիրահառաշ,  
Որ իմ կույր սիրով աչքերս էր կապում,  
Ինձ ծունկի թերում, ինչպես սիրատանջ,  
Խաբված աստծոն՝ սատանի առաջ...  
ԱՇԽ արևն էլ է երբեմն խաբվում՝  
Մեռած լուսնյակին իր լույսով չափում...